

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Կարեն Վարդանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կիսում է առկա խնդրի հետ կապված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի մտահոգությունը և ընդունում է դրա օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը: Սակայն ի տարբերություն օրենսդրական նախաձեռնության հեղինակի, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ պարտադիր դրոշմապիտակավորման պետք է ենթարկվեն ոչ միայն տեսաձայնային կրիչները: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն մշակել և առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը կներկայացնի «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով որոշ ապրանքների պարտադիր դրոշմավորման

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագիծը, որով կլուծվեն սկզբունքային մի քանի, այդ թվում՝ դրոշմապիտակավորման ենթակա ապրանքների ցանկի, պիտակավորման մեխանիզմի, պատասխանատվության միջոցների և այլ հարցեր: Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության շրջանակներում կկարգավորվեն ոչ միայն ձայնագրված տեսաձայնային մագնիսական կրիչների վրա պարտադիր դրոշմավորման ենթակա հսկիչ նշանների տրամադրման, հաշվառման, օգտագործման և պահպանման գործընթացները, այլև տեսաձայնային մագնիսական կրիչների նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացումն ու անօրինական արտադրանքի կանխման գործընթացները:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ակցիզային դրոշմանիշերի կիրառման հետ կապված օրենքով սահմանված պահանջները չպահպանելու համար պատասխանատվություն է սահմանված ոչ միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, այլ նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով: Հսկիչ նշանները (դրոշմապիտակները) ակցիզային դրոշմանիշերին համանման դրոշմանիշեր են, և դրանց կիրառման հետ կապված խախտումները կարող են ունենալ գրեթե նույնպիսի հետևանքներ, ինչպիսիք կարող են առաջացնել ակցիզային դրոշմանիշերի կիրառման հետ կապված խախտումները: Այդ տեսակետից անհրաժեշտ է նախատեսել նաև վարչական պատասխանատվության վերաբերյալ դրույթ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվելիք օրենքի նախագծով նախատեսվել է դրոշմապիտակների կիրառման հետ կապված պահանջների խախտման դեպքերում կիրառել ակցիզային դրոշմանիշերի կիրառման հետ կապված պահանջների խախտման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները:

Ելնելով նշվածից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի ներկայացրած օրենքի նախագծում ներառված են որոշ դրույթներ, որոնք բացակայում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակված օրենքի նախագծում՝ առաջարկում ենք օրենսդրական նախաձեռնության հեղինակին դրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանանալու և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացվելու դեպքում համագործակցել Հայաստանի

Հանրապետության կառավարության հետ՝ նախագծերը միավորելու և այդ նպատակով դրանք լրամշակելու ուղղությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-796-11.12.2009-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մասին

ՀՈԴՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն օրենքը սահմանում է մշակույթի, գրականության, գիտության, արվեստի բնագավառների ստեղծագործությունների հեղինակների, կատարողների, հնչյունագրեր արտադրողների, ֆիլմ արտադրողների, համակարգչային ծրագրեր եւ տվյալների բազաներ պատրաստողների (այսուհետ՝ ստեղծագործողներ) իրենց ստեղծագործությունները, կատարումները ձայնագրված տեսաձայնային մագնիսական կրիչների (այսուհետ՝ սկավառակ) վրա պարտադիր դրոշմավորման ենթակա հսկիչ նշանների (այսուհետ՝ դրոշմապիտակ) տրամադրման, հաշվառման, օգտագործման եւ պահպանման կարգը ինչպես նաեւ սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը:

2. Ստեղծագործության հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքի իրավաստիքոջ եւ դրոշմավորման ենթակա սկավառակներ արտադրողի, ներմուծողի միջեւ ծագող այլ հարաբերությունները կարգավորվում են «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով»:

3. Սկավառակների դրոշմապիտակներով դրոշմավորումը նպատակ ունի՝

ա) պաշտպանել մշակույթի, գրականության, գիտության, արվեստի բնագավառների ստեղծագործությունների հեղինակների, կատարողների, հնչյունագրեր արտադրողների, ֆիլմ արտադրողների, համակարգչային ծրագրեր եւ տվյալների բազաներ պատրաստողների հարակից իրավունքները

բ) սկավառակները կեղծումից պաշտպանելու միջոցով՝ պաշտպանել սպառողների շահերը,

զ) տնտեսավարող սուբյեկտների համար՝ ապահովել արդարացի մրցակցային պայմաններ եւ ապրանքային նշանների լրացուցիչ պաշտպանվածություն,

դ) ստեղծել լրացուցիչ պայմաններ՝ հարկային եկամուտների հավաքագրման եւ Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման համար:

ՀՈՂՎԱԾ 2. ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՎԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ

1. Սույն օրենքի իմաստով դրոշմապիտակ է համարվում սահմանված չափ, ձև եւ կեղծումից բարձր պաշտպանվածության աստիճան ունեցող ինքնաստանձվող, ծալքագծված փայլաթիթեղի մաս ունեցող դրոշմանիշը, որի վրա նշված ապրանքի համառոտ անվանումը, սերիան եւ հերթական համարը հնարավորություն են տալիս նույնականացնել դրանով դրոշմավորված սկավառակներ արտադրողին կամ ներմուծողին, ընդ որում ներմուծված եւ տեղում արտադրված սկավառակների դրոշմապիտակները տարբերվում են գույներով եւ համապատասխանաբար «տեղականե, «ներմուծվածե մակագրություններով:

2. Ինքնաստանձվող դրոշմապիտակների դարձերեսին քսված սոսինձը եւ դրոշմապիտակի ծալքագծերը պետք է բացառեն դրանց անվնաս պոկելու եւ դրոշմապիտակի բազմակի օգտագործման հնարավորությունը: Դրոշմավորման ենթակա ապրանքի վրա պետք է փակցված լինի չվնասված եւ ամբողջական դրոշմապիտակ:

3. Դրոշմապիտակները համարվում են խիստ հաշվառման փաստաթղթեր եւ սահմանված կարգով հաշվառվում են ինչպես հարկային եւ մաքսային մարմինների, այնպես էլ այդ դրոշմապիտակները ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտների կողմից: Վերջիններս դրանց գծով վարում են առանձնացված հաշվառում՝ խիստ հաշվառման փաստաթղթերի համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Եթե այլ բան չի բխում սույն օրենքից՝ դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն են կրում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող կազմակերպություններն (անկախ կազմակերպա-իրավական ձևից եւ կարգավիճակից) ու ֆիզիկական անձինք (այսուհետ՝ անձինք), Հայաստանի Հանրապետությունում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք:

ՀՈՂՎԱԾ 3. ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐ ԶԿԻՐԱՌԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պարտադիր դրոշմավորման ենթակա չեն մարդասիրական օգնության եւ բարեգործական շրջանակներում ներմուծվող եւ անհատույց բաշխման ենթակա՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքները:

ՀՈՂՎԱԾ 4. ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Հաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված սկավառակների վրա իրացման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է (բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի):

2. Հաստանի Հանրապետության տարածքում արտադրված եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված սկավառակի կամ դրա փաթեթավորման վրա պարտադիր կերպով պետք է հայերեն լեզվով նշված լինի ստեղծագործության անվանումը, արտադրող կամ ներմուծող անձի լրիվ անվանումը, հասցեն:

ՀՈՂՎԱԾ 5. ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄԸ

1. Դրոշմապիտակները փակցվում են սկավառակի տուփի, փաթեթավորման այնպիսի հատվածում, որի նյութը ապահովում է դրոշմապիտակի առավել հուսալի փակցումը: Կափարիչով տուփի դեպքում դրոշմապիտակը փակցվում է տուփի բացվող մասի վրա:
2. Նախորդ նմուշի դրոշմապիտակը կիրառությունից հանելու կապակցությամբ վերադրոշմավորման անհրաժեշտության դեպքում նոր նմուշի դրոշմանիշը փակցվում է տուփի կամ փաթեթավորման այն հատվածում, որտեղ դրոշմապիտակ փակցված չէ:

ՀՈՂՎԱԾ 6. ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ, ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Դրոշմապիտակների նմուշները (Էսքիզները) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն:
2. Յուրաքանչյուր տարում կիրառվող դրոշմապիտակների արժեքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ էլնելով դրանց արտադրության, պահպանության, օգտագործումից հանելու հետ կապված ծախսերից: Դրոշմապիտակների արժեքը /գինը/ յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է առնվազն դրա սկզբից մեկ ամիս առաջ: Մինչև սույն մասով սահմանված ժամկետը գին չսահմանվելու դեպքում տվյալ օրացույցային տարվում կիրառվում է դրոշմապիտակների նախորդ տարվա արժեքը:
3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սահմանած նմուշի դրոշմապիտակները կիրառության մեջ դրվում եւ կիրառությունից հանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Այդ դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների իրացման ժամկետը չի կարող պակաս լինել երկու տարուց՝ սկսած դրոշմապիտակները կիրառության մեջ դնելու պահից, կամ 6 ամիս՝ դրան հաջորդող նմուշի դրոշմապիտակները կիրառության մեջ դնելու պահից:

4. Կիրառությունից հանված դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրելի ժամկետից հետո կարող է իրականացվել անմիջական արտադրողի կամ անմիջական ներմուծողի կողմից ապրանքների նոր նմուշի դրոշմապիտակներով դրաշմավորված /հերթական թվով նմուշի դրոշմապիտակներով վերադրոշմավորված/ լինելու դեպքում:

ՀՈՂՎԱԾ 7. ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Դրոշմապիտակները տրամադրվում են հարկային մարմնի կողմից՝ դրոշմապիտակի ձեռք բերման հայտի /այսուհետ՝ հայտ/ հիման վրա: Դրոշմապիտակները տրամադրվում են սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:
2. Դրոշմապիտակներ ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետությունում սկավառակներ արտադրող եւ Հայաստանի Հանրապետություն սկավառակներ ներմուծող անձինք հարկային մարմին են ներկայացնում.

ա) դրոշմապիտակների ձեռքբերման հայտ,

բ) դրոշմապիտակների ձեռքբերման համար պետական բյուջե վճարված գումարը հաստատող փաստաթղթի պատճենը,

գ) հաշվետվություն՝ նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին,

դ) պայմանագիր՝ կնքված ստեղծագործությունների հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքի իրավատերերի հետ, որտեղ հստակ նշված է թողարկվելիք սկավառակների քանակը եւ

ստեղծագործությունների հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքի իրավատերերին վճարվելիք գումարները:

3. Դրոշմապիտակների տրամադրման հայտը կարող է մերժվել սույն հոդվածի 2-րդ մասում նշված փաստաթղթերը ոչ լիարժեք ներկայացված լինելու դեպքում:

4. Սույն հոդվածով նախատեսված հայտի եւ հաշվետվության ձեւերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերը ներկայացվելու դեպքում դրոշմապիտակները անձանց տրամադրվում են 10 օրյա ժամկետում:

ՀՈՂՎԱԾ 8. ՎՆԱՍՎԱԾ ԵՎ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՂՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՂԱՐՁՄԱՆ ԿԱԳԸ

1. Դրոշմապիտակների ձեռքբերման համար պետական բյուջե վճարված գումարը համարվում է համախառն եկամուտից նվազեցման ենթակա ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ստացված դրոշմապիտակները չեն օգտագործվել եւ չեն վերադարձվել:

2. Ձեռք բերված եւ չօգտագործված դրոշմապիտակները վերադարձվում են հարկային մարմնին՝ համապատասխան արադրությունը կամ ներմուծումը դադարեցնելու դեպքում:

3. Վնասված դրոշմապիտակները վերադարձվում են հարկային մարմնին՝ յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներով՝ մինչեւ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

4. Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների վերադարձը սույն հոդվածով սահմանված ժամկետից ուշացնելու կամ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում տարածքային հարկային տեսչությունների կողմից հետ չընդունվելու դեպքերում չվերադարձված կամ հետ չընդունված դրոշմապիտակների թվին, տեսակին համապատասխան հարկ վճարողի կողմից հաշվարկվում է, իսկ չհաշվարկվելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից առաջադրվում է շահույթահարկի (եկամտահարկի), իսկ անձը ԱԱՀ վճարող համարվելու դեպքում՝ նաեւ ավելացված արժեքի հարկի մասով հարկային պարտավորություն՝ ելնելով նախորդ կիսամյակում հարկ վճարողի նույն տեսակի ապրանքի համար կիրառված միջին գներից: Նախորդ կիսամյակում նույն տեսակի ապրանքի իրացումների բացակայության դեպքում սույն մասով սահմանված հարկային պարտավորությունները հաշվարկվում են ելնելով նախորդ կիսամյակում հարկ վճարող նույնանման ապրանքի համար կիրառված միջին գներից, իսկ նման իրացումների բացակայության դեպքում՝ համեմատելի հանգամանքներում այլ հարկ վճարողների կողմից կիրառված գներից:

5. Հարկ վճարողի կողմից վերադարձվող դրոշմապիտակները տարածքային հարկային տեսչությունների կողմից չի ընդունվում, եթե չեն պահպանվել հետեւյալ պայմանները՝

ա) դրոշմապիտակները պետք է փակցված լինեն առանձին էջերի վրա՝ առանց ծալքերի եւ անհարթությունների.

բ) պետք է տեսանելի լինի դրոշմապիտակների սերիան եւ դրա կենտրոնական մասը

գ) դրոշմապիտակի պատռված մասերը պետք է միացված լինեն.

դ) վերադարձվող դրոշմապիտակի մակերեսը (այդ թվում՝ հավաքված առանձին մասերից) պետք է կազմի իր սկզբնական չափի առնվազն 60 տոկոսը:

6. Արգելվում է դրոշմապիտանների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ անձանց, բացառությամբ «Ժամանակավոր արտահանումե մաքսային ռեժիմով արտահանված դրոշմապիտակները օտարերկրյա պայմանադիր կողմին փոխանցելը:

7. Դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ ներմուծվող սկավառակների դրոշմավորումը կարող է կատարվել նախքան այդ ապրանքները Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելը, մաքսային հսկողության ներքո գտնվող տարածքներում (համապատասխան թույլատվության դեպքում՝ մաքսատան, կամ մաքսակետի տարածքում կամ մաքսային պահեստում): Հայաստանի Հանրապետությունում արտադրվող սկավառակների դրոշմավորումը իրականացվում է արտադրողի ընտրած տարածքում:

8. Դրոշմապիտակները կարող են տրամադրվել միայն Հայաստանի Հանրապետության գրանցված (հավառված) կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերին:

ՀՈՂՎԱԾ 9. ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԽԱՆՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Սույն օրենքով սահմանված դրույթները խախտելու համար կիրառվում են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները:

ՀՈՂՎԱԾ 10. ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

Սույն օրենքով սահմանված դրոշմավորման կարգը չի տարածվում այն սկավառակների վրա՝

- որոնք տարանցիկ փոխադրվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով
- որոնք պարունակում են համակարգչային ծրագրեր եւ տվյալների բազա եւ մտնում են որեւէ սարքավորման կոմպլեկտացիայի մեջ:

ՀՈՂՎԱԾ 11. ՕՐԵՆՔԻ ՈՒՃԻ ՄԵՋ ՍՏՆԵԼԸ

Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2010 թվականի հուլիսի 1-ից:

Նախագիծ
Պ-796՝-11.12.2009-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր 158.1 հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

«ՀՈՂՎԱԾ 158.1. ԱՌԱՆՑ ԻՐԱՎԱՏԻՐՈՋ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՆՐԱ ԵՐԿԸ՝ ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԿՐԻՉԻ ՎՐԱ ՁԱՅՆԱԳՐԵԼԸ ՏԱՐԱԾԵԼԸ ԵՎ ՎԱՃԱՌԵԼԸ

1. Առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա երկը՝ շահույթ ստանալու նպատակով, մագնիսական կրիչի վրա ձայնագրելը, տարածելը եւ վաճառելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

2. Նույն արարքը, որը կատարվել է մեկից ավելի անգամ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկ տարի ժամկետով:ե:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենսգրքի 208, 209, 210, 211-րդ հոդվածներում «Ակցիզային դրոշմանիշներե բառերից հետո լրացնել «եւ հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ)ե բառերը:

ՀՈՂՎԱԾ 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2010թվականի հուլիսի 1-ից:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունը երաշխավորում է ստեղծագործության հեղինակի իրավունքի պաշտպանվածությունը այն առումով, որ պաշտպանվելու է նրա ստեղծագործությունը ապօրինի օգտագործումից, միաժամանակ կբարձրանա մագնիսական սկավառակներ ձայնագրողների պատասխանատվությունը ապօրինի գործունեությամբ չզբաղվելու առումով: